

գլխով անոնց վրայ եւ ազատել գերութենէ (1) : Յովհաննէս խոստացաւ իր « եղբայրակցին » փրկութեան համար ձեռքէն եկածն ընել . բայց անձնական զանազան արգելքներու եւ մանաւանդ Պորտուգալի հետ պատերազմի բռնուած ըլլալուն պատճառով երկու տարի յետաձգեց : Օր մըն ալ, Դարգելի անվերջ զիմումներէն զգածուած՝ վերջապէս կատարեց իր խոստումը , Լեւոնի փրկութեան համար նուիրելով « անօթ մի արծաթեայ , գեղեցիկ յոյժ , պատեալ ոսկեով , բաժակ մի ոսկի հանդերձ կափարջաւ , կառուս չորս կարմիրս բարակամանս , երեք հազար մորթս սկիւռի եւ չորս բազէս » (2) . ասոնցմէ զատ՝ պատգամաւորութիւն մըն ալ կարգեց եւ անոնց երթեւեկի ծախքը վճարելով ճամբայ հանեց : Պատգամաւորներն էին՝ 1) իր զինակիրներէն երեք հոգի , որոնց մէկին անունն էր Արփոնսս զէ Կէլար , 2) Մանուէլ անունով հայազգի ստանուն ասպետ մը , որ Լեւոնի փրկութեան համար երկրէ երկիր կը պտըտէր ու զրամ կը շորթէր , 3) Արագոնի թագաւորին հօրեղբայրը Պետրոս Սեզովիացին , որ Կիպրոսի Պետրոս Ա թագաւորին աներն էր եւ Փրանկիսկեան կրօնաւորներու կարգն ընդունած ըլլալուն՝ Եղբայր Պետրոս կը կոչուէր , 4) Դարգել քահանան :

Պատգամաւորները Յովհաննէս թագաւորին կողմէ սուլտանին տարուելիք նուէրները (3) , աղաչողական նամակներն ու յանձնարարական թղթերն առած ճամբայ ելան եւ հասան Բարսելոնա , ուր Մանուէլ բաժնուեցաւ խմբէն եւ փախաւ : Այս միջոցին Արագոնի թագաւորը մասնաւոր նամակով մը կրկին անգամ կը դիմէր սուլտանին , զրկելով մի եւ նոյն դեսպանը՝ Բոնանատ Սապէրա , որ յանձն առած էր այս անգամ իր գրպանէն « յօժարակամ ծախել ֆլորինս հինգ հարիւր յազատութիւն արքայի , գլխացեալ ի վերայ աղիւթից նորա » (4) : Բ. Սապէրա Բարսելոնայի մէջ միացաւ Յովհաննէս Ա-ի պատգամաւորներուն , եւ 1382 մայիսի 21-ին բոլորը մէկէն

(1) *Cronicas de los reyes de Castilla*, lis. Բ, Խ. 135, կրտէք քէ Լեւոն մասնաւոր համակրով իր վիճակը նկարագրած է Յովհաննէս Ա-ին եւ անկէ դարման խնդրած :

(2) Դարգել , Խ. 176 :

(3) Վերջ յիշուած *Cronicas de los reyes de Castilla* կրտէք քէ սուլտանը Լեւոնի փրկութեան համար պահանջած էր՝ ի մէջ այլոց՝ իր երկրին մէջ չգտնուած զարդեր , ինչպէս՝ ծիրանի չուխայ , բագե , բնձուղս , մոխրագոյն իսկական ակունք , եւ ասոնց նման բաներ : Յովհաննէս Ա սուլտանի բոլոր ուզածներն ալ զրկեց : (Անդ) :

(4) Դարգել , Խ. 171 :